ՍԱՂՄՈՍ 47

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աստված երկրի թագավորը <u>MT ներածություն</u> Կորխի որդիների Սաղմոս	Փառաբանեք Աստծուն՝ երկրի իշխանին	Աստված որպես բոլոր ազգերի Թագավորի գահակալության տոնական երգ	Գերագույն իշխանը	Յահվեն՝ Իսրայելի Թագավորը, աշխարհի Թագավորն է
47:1-4	47:1-4	47:1-4	47:1-4	47:1
				47:2-3
				47:4
47:5-9	47:5-7	47:5-7	47:5-7	47:5
				47:6
				47:7-8
	47:8-9	47:8-9	47:8-9	
				47:9

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը կենտրոնանում է Արարչի՝ Փրկիչ Աստծո, տիեզերական մեծարման վրա: Աստված է տիրում (տես՝ Սաղմ. 93:1, 96:10, 97:1, 99:1, Եսայի 52:7):

Բ. Ինչպես և որտեղ է եղել այս թագավորության հիմնումը, անհայտ է:
1. ներկայացված է Իսրայելի վրա ամենամյա Դավթի Թագավորական թագադրման տեսքով
2. բոլոր բաների վերջին ժամանակների վախճանը՝ ավարտը (տես՝ 1 Կորնթ. 15:25-27)

3. ստեղծագործության մեջ Աստծո դիրքի ճիշտ աստվածաբանություն (այսինքն՝ տես <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ</u>, Նա միշտ տիրել է և տիրելու է):

Գ. Սաղմոսի տիեզերական տարրերը հզոր ցուցանիշներ են Աստծուն՝ որպես Արարիչ և Տիեզերքի Թագավոր:
1. բոլոր մարդկանց, Սաղմ. 47:1
2. ամբողջ երկրի վրա մեծ Թագավոր, Սաղմ. 47:2բ
3. հնազանդեցնում է ժողովուրդներին, ազգերին, Սաղմ. 47:3
4. Աստված տիրում է բոլոր ազգերի վրա, Սաղմ. 47:8 (տես՝ Սաղմ. 22:28, 1 Մնաց. 16:31)
5. ժողովրդի (այսինքն՝ ոչ Իսրայելի, այլ հեթանոսների) իշխանները (ազնվականները) հավաքվեցին, Սաղմ. 47:9
6. երկրի վահանները Աստծուն են պատկանում, Սաղմ. 47:9
7. նաև հնարավոր է *Էլիոն* անվանումը, որը տարածված է ՀՄԱ-ում բարձրյալ աստծո համար, կիրառվում է ՅԱՀՎԵԻ համար, որպես այլ աստվածների վրա գերիշխող (կուռքերի, *էլոհիմների*, հրեշտակների, և այլն):

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 47:1-4
[1]Ծա՛փ զարկեք, բոլոր ժողովուրդներ,
Հաղթանակի ձայնով աղաղակեցե՛ք Աստծուն:
[2]Քանի որ Բարձրյալ ՏԵՐՆ ահարկու է,
Նա մեծ Թագավոր է ամբողջ երկրի վրա:
[3]Ժողովուրդներին մեզ է հնազանդեցնում
Ու ազգերին դնում է մեր ոտների տակ:
[4]Մեզ համար ընտրեց մեր ժառանգությունը՝
Հակոբի փառավորությունը, ում Ինքը սիրեց: Սելա:

47:1-2 Ուշադրություն դարձրե՛ք Աստծո անուններին՝
1. Աստված՝ *Էլոհիմ*, Սաղմ. 47:1, 5, 6, 8 (երկու անգամ), 9
2. Տեր՝ ՅԱՀՎԵ, Սաղմ. 47:2
3. Բարձրյալ՝ *Էլիոն*, Սաղմ. 47:2 (ՆՄԱ-ում տարածված անուն աստվածների համար, տես՝ Ծննդ. 14:18-20,22, Թվոց 24:16, 2 Օր. 32:8)
4. Թագավոր՝ Սաղմ. 47:2,6,7 («տիրում է», տես՝ Զաք. 14:9, Մաղ. 1:14)
5. Աբրահամի Աստվածը՝ Սաղմ. 47:9 (այսինքն՝ *Էլոհիմի* ԵԶԱԿԻ ձևը, տես՝ 2 Օր. 32:15,17, Սաղմ. 18:21):

Պոեզիան հաճախ կիրառում է Իսրայելի Աստծո համար տարբեր անուններ: Հաճախ այն ստանձնում է անուններ և նկարագրություններ, որոնք վերցված են այլ մշակույթներից և կիրառվում են Իսրայելի Աստծո համար: Սաղմոսների երկրորդ գիրքը մեծամասամբ կիրառում է *Էլոհիմ* անունը:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ</u>

47:1 Այս Սաղմոսը սկսում է երկրին զգուշացնող երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ (այսինքն՝ «բոլոր ժողովուրդներ»), որ բարձրաձայն ցնծան՝ ուրախանան:
1. «ծա՛փ զարկեք» - BDB 1075, KB 1785, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. աղաղակեցե՛ք Աստծուն – BDB 929, KB 1206, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
   ա. պատերազմի աղաղակ՝ Թվոց 10:9, Հեսու 6:20, Եսայի 42:13, 2 Մնաց. 13:15
   բ. ժողովքի՝ Թվոց 10:7

գ. հաղթանակի՝ Երեմ. 50:15, Սոփ. 3:14
դ. հաստատման՝ 1 Թագ. 10:24, Սաղմ. 47:1, 66:1, 81:1, 95:1-2, 98:4, 100:1, Զաք. 9:9
ե. կրոնական ուրախություն՝ 1 Թագ. 4:5, Եզրաս 3:11, 13
զ. վշտի՝ Եսայի 15:4, Միքիա 4:9

47:2 «վախենալ/ահարկու է» Այս ԲԱՅԸ (BDB 431, KB 432, *Niphal* ԴԵՐԲԱՅ, տես՝ ՀԱՅՈՒԿ ԹԵՄԱ. ՎԱԽ (ՀԿ)) ցույց է տալիս՝

1. անապատը, որն անցավ Իսրայելը Ելիցի ժամանակ, տես՝ 2 Օրինաց 1:19, 8:15
2. հիացմունքի արտահայտում՝ Սաղմ. 47:2, 68:35, 76:8
3. ակնածանքի ներշնչանք՝ 2 Օրինաց 7:21, 10:17, Նեեմ. 1:5, 9:32, Դան. 9:4

Թվոց 2 և 3 գլուխները շատ նման են իրենց իմաստով: Նա է միակ Սուրբը, իսկ մենք մեղավոր արարածներ ենք: Սակայն Նա ընտրել է մեզ հետ փոխհարաբերվել:

❖ **«ամբողջ երկրի վրա»** Կարծես թե Սաղմոս 45-50-ում առկա է պարբերաբար կրկնվող շեշտադրություն համաշխարհայինի վրա (տես՝ Սաղմ. 47:1, 7-9, Սաղմ. 45:16, 46:10, 47:2, 48:2, 49:1, 50:1,4,13): «Հնարավոր է» այս թեմայի պատճառով է, որ այս Սաղմոսները իրար հետ են հավաքագրվել: Տես նաև Սաղմոս 96-99:

Երկիրը Տիրոջն է (տես՝ Ելից 9:29, 19:5): Նա է արարիչը, պահպանողը (այսինքն՝ *Էլոհիմ*, Ծննդոց 1), փրկիչը և ուխտի Աստվածը (այսինքն՝ ՅԱՀՎԵՆ, Ծնն. 2:4): Ուրիշ մեկը չկա (տես՝ ՀԱՅՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ):

47:3-4 Այս համարները շեշտադրում են Իսրայելի ընտրությունը որպես ՅԱՀՎԵԻ հատուկ ուխտի ժողովուրդ (այսինքն՝ Ծնն. 12:1-3, Ելից 19:5-6): Իսրայելից սպասվում էր ազգերի համար լույս լինել, սակայն նա ձախողեց (տես՝ Եզեկ. 36:22-23, տես՝ ՀԱՅՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ):

Իսրայելի ռազմական հաղթանակները ՅԱՀՎԵԻ հաղթանակներն էին (այսինքն՝ սուրբ պատերազմ):

47:4 «ժառանգություն» Ավետյաց Երկիրը հողատարածքների բաժանելիս (այսինքն՝ Հեսու 12-19) Ղևտացիներին հող չտրվեց (այսինքն՝ 48 քաղաք, տես՝ Հեսու 20-21): Նրանց ասվեց. «ՅԱՀՎԵՆ է ձեր ժառանգությունը»: Այս հրաշալի խոստումը տարածվեց ամբողջ Իսրայելի և 1 Պետ. 1:4-ի հավատացյալների վրա որպես խոստում:

Սա նաև կարող եք տեսնել, որ նկատի ունի Քանանը (այսինքն՝ Ավետյաց Երկիրը, Ծնն. 12:7, 15:12-21, 17:8, Ելից 3:8, 2 Օր. 1:8): Թվում է թե «ժառանգություն» և «Հակոբի փառքը» (BDB 144) զուգահեռներ են: Սա հաստատելու իմ դժկամությունը կայանում էՍաղմոսների տիեզերական շեշտադրությունը: Երկիրը, ոչ միայն Քանանը, Տիրոջն է:

❖ **«ու Ինքը սիրեց»** ՀԿ-ում Իսրայելը ունի կենտրոնական դերակատարում, իսկ ՆԿ-ում՝ Հիսուսի ավետարանը (տես՝ Հովհ. 3:16, 4:42, 1 Տիմ. 2:4, 4:10, 1 Հովհ. 2:1-2, 4:14): Քրիստոնյաները պետք է ՀԿ-ը դիտարկեն, մեկնաբանեն ՆԿ-ի աչքերով, ոչ թե հակառակը:

❖ **«Սելա»** Տես Սաղմ. 3:2-ի գրառումը և Սաղմոսների Ներածություն, VII:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 47:5-9
5Աստված ցնծության գոչյուններով վեր բարձրացավ,
ՏԵՐԸ՝ շեփորի ձայնով:
6Փառաբանությունն՝ երգեցեք Աստծուն, սաղմո՛ս երգեցեք.
Սաղմո՛ս երգեցեք մեր Թագավորին, սաղմո՛ս երգեցեք.

[7]Քանի որ Աստված ամբողջ երկրի Թագավորն է.
Փառաբանությո՛ւն երգեցեք Նրան իմաստությամբ:
[8]Աստված թագավորում է հեթանոսների վրա,
Աստված նստում է Իր սրբության գահի վրա:
[9]Ժողովրդի իշխանները հավաքվեցին Աբրահամի Աստծո ժողովրդի հետ,
Քանի որ երկրի վահաններն Աստծուն են պատկանում.
Նա մեծապես բարձրացված է:

47:5-9 Այս պարբերությունը կենտրոնանում է Աստծուն փառաբանելու վրա: Ուշադրություն դարձրե՛ք ձայնային հայտարարություններին վերաբերող բառերի վրա:

1. գոչյուններով, Սաղմ.47:5
2. շեփորի ձայնով, Սաղմ.47:5
3. (#3-7) փառաբանություններ երգեցե՛ք, Սաղմ.47:6-7 – BDB 274, KB 273, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, 5 անգամ

Շատ գիտնականներ Սաղմ.47:6-7 դիտարկում են որպես տարեկան տոնակատարության նկարագրություն, որտեղ իսրայելացի թագավորը գահն էր բարձրանում, որպես սիմվոլիկ ներկայացուցիչ ՅԱՀԵՎԻ տիեզերական իշխանության (այսինքն՝ տապանակը ետ է բերվում տաճար՝ տոնախմբությունից հետո, տես՝ 2 Թագ.6:15): Ինչքան էլ որ գրավիչ է այս տեսությունը, մի փոքր պատմական վկայություն ունի:

47:5 «շեփոր» Տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ԵՂՋՅՈՒՐՆԵՐԸ</u>

47:7

NASB	**«հմտորեն սաղմոսեք»**
NKJV	**«իմաստությամբ»**
NRSV	**«սաղմոսով»**
JPSOA	**«օրհներգ»**
REB	**«ձեր ամբողջ հմտությամբ»**

Այս տերմինը (BDB 968) կիրառվում է MT թարգմանության մեջ որպես տասներեք Սաղմոսների վերնագիր, սակայն այստեղ Սաղմոսի տեքստում է: BDB ասում է, որ սա նշանակում է «հայեցողական բանաստեղծություն», KB տալիս է՝

1. «պաշտամունքի երգ» (Kittel)
2. «իմաստության երգ՝ մեղեդիով» (Mowinckel)

Դերեկ Քիդները *Թինդեյլ ՀԿ Մեկնություններ*, հատոր 15, էջ՝ 195, այս բառը կապում է (այսինքն՝ *MAskil- Մասկիլ*) Պողոսի 1 Կորնթ.14:15-ի հայտարարության հետ: Սա հետաքրքիր է, սակայն ոչ համոզիչ: Հաճախ շատ դժվար է տարբերակել ՀԿ-յան ակնարկները ՆԿ-յան գրքերում:

47:9 Այս համարը ենթադրում է, որ բոլոր առաջնորդները (այսինքն՝ իրենց ժողովրդի խմբերին ներկայացնող) հավաքվում են Իսրայելի հետ միասին (այսինքն՝ Աբրահամի Աստծո ժողովուրդը, տես՝ Ծնն.12:3, 22:18, Հռոմեացիների 4, Գաղ.3:6-9):

«Վահաններ» արտահայտությունը ռազմական նկարագրություն է ՅԱՀՎԵԻ տիեզերական հաղթանակի համար (տես՝ Սաղմ.46:8-11):

ՅԱՀՎԵԻ տիրակալությունը ամբողջ երկրի վրա իրականացավ հենց Իր գործերի միջոցով («խիստ մեծարված» - BDB 748, KB 828, *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ.46:10, Ես.2:11, 17, նաև ուշադրություն դարձրե՛ք՝ Հովի.3:14-15, որտեղ «բարձրացած» բառը նույնպես նշանակում է «խիստ մեծարված»):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ ընդհանրություն ունեն Սաղմոս 45-50:
2. Թվարկե՛ք Աստծո անունները և բացատրե՛ք յուրաքանչյուրի իմաստը:
3. Սաղմ. 47:9-ում ո՞ւմ մասին է խոսվում:
4. Թվարկե՛ք Սաղմոսի տիեզերական տարրերը: Ի՞նչ է սա նշանակում: